# «ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ» ԸՆԴՀԱՏԱԿՅԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

**ՇԱՀԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
Երևանի պետական համալսարան, Երևան, ՀՀ
***Էլ. հասցե՝*** sh.harutyunyan.edu@gmail.com

***DOI: 10.24234/scientific.v2i47.161***

**ԱՄՓՈՓՈՒՄ**

20-րդ դարի 60-ական թթ.ընթացքում Խորհրդային Հայաստանում ձևավորվեցին մի շարք ընդհատակյա կազմակերպություններ, որոնք էական ազդեցություն ունեցան Խորհրդային Հայաստանում հասարակական տրամադրությունների վրա, մեծապես նպաստեցին ազգային հարցերի բարձրաձայնմանը, Հայաստանի անկախության վերականգման համար պայքարին, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանությանը: Ի թիվս այլ կազմակերպությունների, 1960-ական թթ.վերջին Խորհրդային Հայաստանում ասպարեզ իջավ «Հանուն Հայրենիքի» ընդհատակյա կազմակերպությունը, որը կրում էր ժամանակաշրջանի ոգուն բնորոշ գաղափարական՝ ազգային պահանջատիրություն պարունակող տարրեր: «Հանուն Հայրենիքի» ընդհատակյա կազմակերպությունն իր ուրույն դերն ու նշանակությունն ունեցավ Խորհրդային Հայաստանում ծավալված այլախոհական շարժումների ընթացքում:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել հայկական այլախոհության դրսևորումներից մեկը՝ «Հանուն Հայրենիքի» ընդհատակյա կազմակերպությունը և նրա ծավալած գործունեությունը:

Նպատակն իրականացնելու համար խնդիր է դրվել հետազոտել և քննարկել Խորհրդային Հայաստանում հիմնադրված վերոնշյալ կազմակերպության հիմնադրման ընթացքը, գաղափարական առաջնահերթությունները և ծավալած գործունեությունը:

Հետազոտությունը կատարվել է պատմական, պատմահամեմատական մեթոդների միջոցով: Իրականացվել է պետական և անձնական արխիվային նյութերի, հարցազրույցների, հուշագրությունների կոնտենտ վերլուծություն:

Հիմնավորվել է, որ «Հանուն Հայրենիքի» ընդհատակյա կազմակերպության հիմնական գաղափարական առաջնահերթությունը եղել է ազգային հարցերի մասին բարձրաձայնումը, Ղարաբաղի և Նախիջևանի՝ Մայր Հայաստանին վերամիավորման պահանջը, հայոց լեզվի մաքրության պահպանումը: Այս ամենն արտացոլվել է կազմակերպության անդամների կողմից տպագրված համանուն ամսագրի հոդվածներում:

***Բանալի բառեր՝*** այլախոհություն, Հայոց ցեղասպանություն, հողային պահանջատիրություն, «Հանուն Հայրենիքի» ամսագիր, «Բաց նամակ Քոչինյաններին», «Դատական կատակերգություն», «Երկու խոսք Ղարաբաղի և Նախիջևանի մասին»:

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

20-րդ դարի 60-ական թվականներից Խորհրդային Հայաստանում սկզբնավորված այլախոհության ժամանակաշրջանում, ձևավորվեցին և հիմնադրվեցին մի շարք ընդհատակյա կազմակերպություններ, որոնք ավելի ինստիտուցիոնալ բնույթ էին հաղորդում այլախոհական շարժումներին: 1960-ական թթ.սկզբներից Խորհրդային Հայաստանում արդեն գործում էին տարբեր կազմակերպություններ, ինչպիսիք էին «Հայ երիտասարդների միությունը», «Հայ հայրենասերների միությունը», «Ազգային միացյալ կուսակցությունը» և այլն (Հայոց Պատմություն, 2016):

1968թ. սկզբին Խորհդրային Հայաստանում իր գործունեությունն է սկսում ծավալել «Հանուն Հայրենիքի» ընդհատակյա կազմակերպությունը: Այս կազմակերպության հիմնական նպատակներն էին Հայոց ցեղասպանության ճանաչումը, կորսված հայկական տարածքների՝ Ղարաբաղի և Նախիջևանի մասին բարձրաձայնումը, հայոց լեզվի պահպանմանն ուղղված քայլերը: Ուսումնասիրելով «Հանուն հայրենիքի» խմբի ծավալած գործունեությունը՝ կարելի է ընդգծել, որ թեև այն չուներ անկախությանը միտված պայքարի հստակ ուղի, սակայն խմբի անդամները խիստ քննադատության էին ենթարկում Խորհրդային կարգերը՝ դատապարտելով ռուս-թուրքական հարաբերությունները, համարելով, որ հայ ժողովուրդը զոհ է գնում այդ հարաբերություններին (Հարությունյան Շ, 2024, Այլախոհական շարժումների…): Այս կազմակերպության գաղափարական առանցքը ձևավորված էր ազգային հարցերի բարձրաձայնման, Ղարաբաղի և Նախիջևանի Խորհրդային Հայաստանին վերամիավորման պահանջի շուրջ, որոնք ամբողջացնում էին հայկական այլախոհության՝ ազգային հարցերի բարձրաձայնման գաղափարական ուղղությունը (Հարությունյան Շ, 2024):

Այս կազմակերպության հիմնական գործունեությունը ծավալվել է «Հանուն Հայրենիքի» ամսագրի տպագրության շուրջ: Ամսագիրը բաղկացած էր 38 էջերից և ուներ ընդհանուր, պատմական, գեղարվեստական և տեղեկատու բաժիններ, որտեղ ներառված էին 7 հոդվածներ: Թեև տպագրված ամսագիրը չտարածվեց հայ ժողովրդի շրջանում՝ Պետական անվտանգության կոմիտեի (այսուհետ՝ ՊԱԿ) կողմից կազմակերպության անդամների բացահայտման և կալանավորման պատճառով, այդուհանդերձ այդ ամսագիրը կարևոր սկզբնաղբյուր է հանդիսանում «Հանուն Հայրենիքի» ընդհատակյա կազմակերպության ուսումնասիրման համար:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս ուսումնասիրությունը կրում է համապարփակ հետազոտական բնույթ, որը ներառում է պատմական և համեմատական մեթոդներ՝ 1968թ. սկզբին Խորհրդային Հայաստանում հիմնադրված «Հանուն Հայրենիքի» ընդհատակյա կազմակերպության ուսումնասիրելու համար:

Այս կազմակերպությանն առնչվող պետական և անձնական արխիվային նյութերի ծավալուն բովանդակային վերլուծություն է իրականացվել: Սա ենթադրում է պաշտոնական փաստաթղթերի, արձանագրությունների, հուշագրությունների, հարցրազրույցների և ցանկացած առկա նյութի ուսումնասիրություն, որն արտացոլում է կազմակերպության գաղափարախոսությունը և ծավալած գործունեությունը: Օգտագործվել է տվյալների վերլուծության համակարգված մոտեցում՝ ներառելով արդյունքների դասակարգումը և մեկնաբանումը:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ

### «Հանուն Հայրենիքի» ընդհատակյա կազմակերպության հիմնադրումը և համանուն ամսագրի տպագրումը

Մինչև ընդհատակյա կազմակերպության ստեղծումը Հովիկ Վասիլյանը և Ճիրակ Գյունաշյանը մշտապես հանդիպումներ են ունեցել միմյանց հետ ու խոսել են հայ ժողովրդի պատմական անցյալի, նրա տարածքների, ինչպես նաև հայոց լեզվի անաղարտության մասին: Ըստ նրանց քննարկումների և եզրահանգումների, Հայաստանի խորհրդայնացումից հետո հայոց լեզուն ռուսացվում է, ինչպես նաև, հայ ժողովրդի շահերը ոտնահարվում են ռուսների կողմից: Հ. Վասիլյանը և Ճ. Գյունաշյանը մտքեր են փոխանակել այն մասին, որ հայ ժողովրդի այն մասը, որը մշտապես բնակվում է Խորհրդային Միության մյուս հանրապետություններում, հալածված է և գտնվում է «ողբերգական» վիճակում:

1965թ. գարնանը Հ. Վասիլյանը, Ճ. Գյունաշյանը, Գ. Գևորգյանի և Մ. Մնոյանի հետ, Երևան քաղաքի «Լենինյան շրջանում» և «Մոսկվա» կինոթատրոնի հարակից տարածքում տարածում են «Այլևս չի կարելի լսել» վերնագրով լուսազգայուն թղթի վրա տպագրված 50 օրինակ թռուցիկները: Թռուցիկի բովանդակության հեղինակը Հովիկ Վասիլյանն էր: Այնտեղ հեղինակը ներկայացնում է Խորհրդային Միության ժողովուրդների վիճակը՝ նշելով, որ «խարիսխվում են» ժողովուրդների արտոնությունները և այդ ազգերը ռուսականացվում են (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 6, թ. 4):

1967թ. փետրվարին Գևորգ Հեքիմյանը, հակախորհրդային հայացքներ ունեցող Մարտին Նալբանդյանից, վերցնում է «Կրկին ռուս-թուրքական դիվանագիտության զոհասեղանին» վերտառությամբ թռուցիկը՝ նպատակ ունենալով տարածել Երևան քաղաքում: Գ. Հեքիմյանը թռուցիկը փոխանցում է Հ. Վասիլյանին, որն էլ, թռուցիկի տարածման գործին ներգրավվում է Ճ.

Գյունաշյանին, Լ. Առուշանյանին և Մ. Մնոյանին: Թռուցիկների տարածումը տեղի է ունեցել 1967թ. մարտին: Մի քանի հարյուր օրինակ թռուցիկները տարածվում են Լենինի անվան պողոտայում գտնվող փակ շուկայում և Աբովյան քաղաքում: Այս թռուցիկին զուգահեռ տարածվում են նաև նմանաբովանդակ անվերնագիր այլ թռուցիկներ: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ «Կրկին ռուս-թուրքական զոհասեղանին» վերնագրով թռուցիկների մի մասը տարածվել է Երևանի «Աերոֆլոտի» քաղաքային գործակալության բարձրահարկ շենքի տանիքից՝ պիրոտեխնիկական հարմարանքի գործադրմամբ, ինչը պատրաստել էին Հ. Վասիլյանը և Մ. Մնոյանը:

Վերոնշյալ թռուցիկների տարածմամբ հայ այլախոհներն իրենց դժգոհությունն ու անհամաձայնությունն էին հայտնում Խորհրդային իշխանությունների վարած ներքին և արտաքին քաղաքականության վերաբերյալ: Ըստ թռուցիկների բովանդակության՝ Խորհրդային իշխանությունները շարունակում են Ցարական Ռուսաստանի քաղաքականությունը, որի արդյունքում ոտնահարվում են հայ ժողովրդի իրավունքները, և տեղի է ունենում «բարոյական գենոցիդ»:

Այս ընթացքում, Գ. Հեքիմյանը, Հ. Վասիլյանը և Ծ. Գյունաշյանը ծանոթանում են Ասատուր Բաբայանի, Աղասի Անտոնյանի և Սարգիս Թորոսյանի հետ: Այս նոր գաղափարական ծանոթությունները դրական են անդրադառնում հակախորհրդային կեցվածք ունեցող այլախոհների նկատմամբ: Վերջիններս, իրենց ծավալած գործունեությունը ավելի կազմակերպված դարձնելու և կառուցվածքային բնույթ հաղորդելու նպատակով 1968թ. սկզբներին որոշում են ստեղծել գաղտնի կազմակերպություն, որը պետք է զբաղվեր հակախորհրդային բնույթի թերթերի և ամսագրերի տպագրությամբ և ժողովրդի մեջ տարածելու հարցերով:

Կազմակերպության գործունեության ընթացքում Հայկ Իսկանդարյանը ձեռք է բերում և կազմակերպության մյուս անդամներին է ծանոթացնում Գարեգին Նժդեհի «Բաց նամակ հայ մտավորականությանը» գիրքը, որն արգելված և սահմանափակված էր Խորհրդային իշխանությունների կողմից: Այս գրքում մանրամասն ներկայացված Գ. Նժդեհի մտքերը ռուս-թուրքական հարաբերությունների, անկախության գաղափարի, հայ սերունդների դաստիարակման և առաջնային արժեքների մասին (Նժդեհ, 1968):

1968թ. մարտ-մայիս ամիսների ընթացքում Հ. Վասիլյանը, Գ. Հեքիմյանը, Ա. Անտոնյանը, Ա. Բաբայանը և Ս. Թորոսյանը մի քանի անգամ գաղտնի հանդիպումներ են ունենում 1966թ. հիմնադրված «Ազգային միացյալ կուսակցություն» ընդհատակյա կազմակերպության հիմնադիրներից Հայկազ Խաչատրյանի և Շահեն Հարությունյանի հետ: Երկու կազմակերպությունների ներկայացուցիչները միմյանց հետ իրականացրել են քննարկումներ, փորձել են գտնել գաղափարական ընդհանրություններ՝ կազմակերպությունները միացնելու և

համատեղ պայքար մղելու նպատակով: Սակայն, համագործակցության արդյունքում կազմակերպությունները չեն միացվել՝ ծրագրային որոշ տարաձայնությունների պատճառով: Ըստ էության, Ազգային միացյալ կուսակցության ծրագրի առանցքը ձևավորված էր Հայաստանի անկախության վերականգման համար պայքարի շուրջ (Հարությունյան Ծ., 2024): Եվ պատահական չէր, որ ծրագրի հիմնական նպատակներն էին համարվում Հայաստանի ազատագրությունն ու անկախության վերականգնումը: Թեև «Հանուն Հայրենիքի» և «Ազգային միացյալ կուսակցություն» կազմակերպությունների անդամները հայրենասիրական-ազգային հարցերում նույնանման մոտեցումներ և դիրքորոշումներ ունեին, այնուամենայնիվ «Հանուն Հայրենիքի» կազմակերպության ծրագրում ուղիղ իմաստով բացակայում էր Հայաստանի անկախության վերականգման համար պայքարի առաջնայնությունը:

Հովիկ Վասիլյանը, Ասատուր Բաբայանը, Գևորգ Հովսեփյանը, Աղասի Անտոնյանը, Սարգիս Թորոսյանը և Շիրակ Գյունաշյանը բազմաթիվ հանդիպումներ և քննարկումներ են կազմակերպում Ա. Անտոնյանի բնակարանում, որի ընթացքում քննարկում են «Հանուն Հայրենիքի» վերնագիրը կրող ամսագիր հրատարակելու հարցը, նրանում ապագայում տպագրվող հոդվածների բովանդակությունը: Ի թիվս այլ կազմակերպչական հարցերի՝ քննարկվել են նաև տպագրական միջոցներ հայթայթելու, ինչպես նաև տպագրական մեքենա ձեռք բերելու հարցերը (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 6, թ. 5):

«Հանուն Հայրենիքի» հայրենասիրական և պահանջատիրական ամսագրի տպագրման համար նախատեսված, մի քանի ամիս տևած, աշխատանքները մանրակրկիտ իրականացնելուց հետո՝ 1968թ. մարտին, Աղասի Անտոնյանը և Շիրակ Գյունաշյանը սկսում են ամսագրի տպագրությունը՝ 343 օրինակ: Կազմակերպված մի շարք հանդիպումների և քննարկումներ արդյունքում Հովիկ Վասիլյանն ընտրվում է կազմակերպության ղեկավար՝ «Հարություն Բագրատունյաց» ծածկանունով, Գևորգ Հեքիմյանն ընտրվում է Հ. Վասիլյանի տեղակալ՝ «Գարսևան Հովհաննիսյան» ծածկանունով, Ասատուր Բաբայանն ընտրվում է կազմակերպության գործունեությունը վերահսկող՝ «Զարգանդ Մաշտոց» ծածկանունով, Սարգիս Թորոսյանն ընտրվում է կազմակերպության մատակարարման ղեկավար՝ «Ծավարշ Սիրունյան» ծածկանունով: Բոլոր նշված մարդիկ ընտրվում են «Հանուն Հայրենիքի» ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 6, թ. 6):

**«Հանուն Հայրենիքի» ամսագրի բովանդակությունը**

Ամսագիրը բաղկացած էր 38 էջերից և ունենալու էր ընդհանուր, պատմական, գեղարվեստական և տեղեկատու բաժիններ: Ամսագրի շապիկին մեծատառերով տպագրված էր 1962թ. Երևանում հիմնադրված առաջին հայկական այլախոհական կազմակերպության՝ Հայ երիտասարդական միության անդամ Վիգեն Բաբայանի «Կտակ հայ որդուն»

բանաստեղծությունից մեկ հատված. «*Քանզի սնվել ես մորդ արգանդում որպես հայ որդի, երդվի՛ր սիրելիս, որ պիտի պաշտես սուրբ հողը նրա, դու պիտի լինես դյուցազուն զինվոր քո ժողովրդի, մաշտոցյան լեզուն անաղարտ պահես շրթերիդ վրա*» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 6, թ. 18) : Վերջին էջում կազմված էր բովանդակությունը՝ բաղկացած 7 մասերից.«Որպես նախաբան», «Բաց նամակ Քոչինյաններին», «Դատական կատակերգություն», «Ավ. Ահարոնյան. Սովետական Ռուսիոյ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար պարոն Չիչերինին», «Ն. Բաղալյան Ապստամբության աղբյուրները», «Ի. Ստալին Ընկեր Լենին», «Երկու խոսք Ղարաբաղի և Նախիջևանի մասին»:

«Հանուն Հայրենքի» ամսագրի համար Հովիկ Վասիլյանը գրել է 3 հոդված, որոնք վերնագրված էին՝ «Որպես նախաբան», «Բաց նամակ Քոչինյաններին», «Դատական կատակերգություն» անուններով: Այս հոդվածներում Հ. Վասիլյանը ներկայացնում է «Հանուն Հայրենիքի» ընդհատակյա կազմակերպության ծրագիրը, անդրադառնում է 1967թ. նոյեմբերի 25-29-ին տեղի ունեցած «Հայաստանի վերամիավորման շարժում» ընդհատակյա կազմակերպության անդամների դատավարությանը, գովեստով է ներկայացնում Դաշնակցություն կուսակցության գործունեությունը 1918-1920 թթ. ընթացքում, այնուհետև հայտնում է իր դիրքորոշումը բոլշևիկների և նրանց վարած քաղաքականության մասին՝ նրանց անվանելով «գաղութարարներ»: Մյուս կողմից՝ Վասիլյանն իր հոդվածներում մեղադրում է Ռուսաստանին՝ հայկական ջարդերի ժամանակ Թուրքիային աջակցություն ցուցաբերելու համար: Այս գրվածքներում, հեղինակը հայ ժողովրդին կոչով է դիմում՝ «Միավորվել մեկ ընդհանուր համաժողովրդական հզոր շարժման մեջ»:

«Որպես նախաբան» հատվածը, ըստ էության, ներկայացնում է «Հանուն Հայրենիքի» կազմակերպության ծրագիրը, նպատակները և պայքարի առաջնահերթությունները: Նշվում է նաև, որ «Հանուն Հայրենիքի» ամսագիրը բաց է բոլոր այն կազմակերպությունների, կուսակցությունների և անձնավորությունների համար, որոնք իրոք նպատակ ունեն պաշտպանելու հայ ժողովրդի շահերը և ինչը բարձր են դասում բոլոր տեսակի քաղաքական և սոցիալական հարցերից, հասկանում են ամբողջ հայ ժողովրդի միասնության և միաձայնության կենսական անհրաժեշտությունը:

«Բաց նամակ Քոչինյաններին» հոդվածում (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 6, թ. 20 )Հ. Վասիլյանը քննադատաբար է անդրադառնում է Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Անտոն Քոչինյանի 1968թ. մարտի 6-ի Կոմերիտմիության 24-րդ համագումարում ունեցած ելույթին, որի ընթացքում Ա. Քոչինյանը, խոսելով հայ իրականության մեջ տարածվող հայրենասիրական մտքերի ու գաղափարների մասին, նշել էր, որ այդ ամենը «իմպերիալիստական գործակալների և դաշնակցական գաղափարական դիվերսիայի» արդյունքում են: Հեղինակը, իրականացնելով պատմական ակնարկ, մասնավորապես 1918-1920թթ. գոյություն ունեցած

Հայաստանի Հանրապետության ժամանակաշրջանի մասին, գովաբանությամբ է հիշատակում Ցեղասպանությունից և Առաջին համաշխարհային պատերազմից հետո ստեղծված դժվարին պայմաններում Հայաստանի անկախ Հանրապետության հիմնադրումը, մեղադրում է բոլշևիկներին Թուրքիային և Ադրբեջանին օգնելու, նրանց հետ համագործակցելու և Հայաստանի Հանրապետությունը կործանելու համար: Հ. Վասիլյանը մեղադրում է բոլշևիկներին Քեմալ Աթաթուրքին ոսկով, զենքով, զորաբանակով օգնելու համար: Այնուհետև անդրադառնում է բոլշևիկա-թուրքական համատեղ ծրագրերին՝ նշելով, որ «Բոլշևիկների հետ միասին էր, որ Աթաթուրքը ցանկանում էր «հայկական ագրեսորներին ու իմպերիալիստներին» իսպառ բնաջնջել աշխարհի երեսից»: Այս հատվածում, միանշանակ, Հ. Վասիլյանը նկատի է ունենում 1921թ. մարտի 16-ին կնքված Մոսկվայի ռուս-թուրքական «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագիրը, որն իր սույր և թշնամական ծայրով ուղղված էր Հայաստանի և հայ ժողովրդի դեմ (Հարությունյան Շ, 2023): Մոսկվայի պայմանագրի հենց սկզբնամասում նշված է, որ կողմերը համատեղ պայքար են մղում իմպերիալիզմի դեմ (Կիրակոսյան Ջ. Ս, Սահակյան Ռ.Գ., 1972):

«Դատական կատակերգություն» հոդվածում (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 6, թ. 22), Հ. Վասիլյանը մանրամասն անդրադառնում է 1967թ. նոյեմբերի 25-29-ին տեղի ունեցած «Հայաստանի վերամիավորման շարժում» ընդհատակյա կազմակերպության անդամների դատավարությանը՝ նշելով. «Դարձյալ հայ ժողովրդի 3 ազնիվ ու հայրենասեր զավակներ դատվեցին հանուն այն բանի, որ քննադատել էին մի քաղաքականություն, որը, բխելով ռուս-թուրքական հարաբերությունների շահերից, բոլորովին հաշվի չէր առնում այդ առնչությամբ տուժող Հայ ժողովրդի շահերը»: Դատավարական ընթացքը նկարագրելիս Հ. Վասիլյանը նշում է, որ «մեղադրական որևէ լուրջ փաստի բացակայությունը, հնարավորություն չէր ընձեռնում դատական կազմին զեթ ձևականորեն մնալու օրինականության սահմաններում»:

Սարգիս Թորոսյանը «Հանուն Հայրենիքի» ամսագրում տպագրելու նպատակով ձեռք է բերում Ա. Ահարոնյանի «Սովետական Ռուսիոյ Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար պարոն Չիչերինին» և Ն. Բաղալյանի «Ապստամբության աղբյուրները» հոդվածները, որոնք վերցված են Դաշնակցության «Հեղափոխական ալբոմ» ամսագրից: Ընտրված հոդվածները պատահական չէին և ամբողջովին տեղավորվում էին «Հանուն Հայրենիքի» ամսագրի գաղափարական տրամաբանության սահմաններում: Նշյալ հոդվածների բովանդակության համաձայն Խորհրդային Հայաստանը զոհ է դարձել Խորհրդային դիվանագիտությանը, և Հայաստանի խորհրդայնացումը դժբախտություն է հայ ժողովրդի համար: Պատմաքաղաքական վերլուծություն է կատարվում Ռուսաստանի վարած քաղաքականության վերաբերյալ, կոչ է արվում պայքարել Հայաստանի անկախության համար, քանի որ երկիրը գտնվում է ստրկական վիճակում:

«Սովետական Ռուսիոյ Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար պարոն Չիչերինին» հոդվածում (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 6, թ. 24), Ա. Ահարոնյանը մեղադրում է Բոլշևիկյան Ռուսաստանին Թուրքիայի հետ համագործակցելու և միասնաբար Հայաստանի անկախության ու հայ ժողովրդի շահերի դեմ պայքարելու համար: Ալեքսանդրապոլի պայմանագրի մասին խոսելիս հեղինակը նշում է, որ Հայաստանի համար աղետալի պայմանագրի կնքմանը մասնակցել է նաև Ռուսաստանը, և վերջինիս դավերի արդյունքում է Հայաստանը ստիպված եղել կնքել այդ պայմանագիրը:

«Ապստամբության աղբյուրները» հոդվածում (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 6, թ. 29), Ն. Բաղալյանը նշում է, որ ռուսները վավերացրին Ալեքսանդրապոլի պայմանագիրը Կարսի անխախտ դաշնագրով: Հեղինակը նկատի է ունենում 1921թ. հոկտեմբերի 13-ին կնքված Կարսի պայմանագրի մասին: Այդ մասին հեղինակը գրում է. «Իսկ ո՞վ չգիտեր, որ Կարսի դաշնագիրը Հայաստանի ծնկաչոք ստրկացումն է, երկրի հայության ամենօրյա մղձավանջը և Հայաստանից դուրս ապրող երկու միլիոն հայության տարագրության հավերժացումը, ուծացումը, աստիճանական ու ապա վերջնական ձուլումը…»:

«Ընկեր Լենին» հատվածում ներկայացված է Ստալինի փոքրիկ գրությունը Լենինին, որտեղ խոսելով Վանի, Մուշի և Բիթլիսի մասին՝ Հայստանին համարում է որպես իմպերիալիստական երկիր՝ նշելով, որ հայկական իմպերիալիստական պահանջները չեն կարող լինել իրենցը:

Գևորգ Հեքիմյանը «Հանուն Հայրենիքի» ամսագրի համար գրում և տպագրության է հանձնում «Երկու խոսք Ղարաբաղի և Նախիջևանի մասին» վերնագրով հոդվածը (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 6, թ. 38) : Հեղինակը հոդվածում անդրադարձ կատարելով հայկական պատմական հողերին, որոնք Խորհրդային իշխանությունների կողմից բռնի կերպով խլվել և փոխանցվել էին Խորհրդային Ադրբեջանին, ռուսներին համարում է «ազգակուլներ»: Հոդվածի վերջում հեղինակը պայքարի կոչ է անում՝ նշելով. «Մենք պետք է վերածնենք մեզ մեր արյամբ, կամքի ու նվիրվածության զնով: Իմացած եղեք, որ երկչոտներին պատմությունը չի ներում»:

**Կազմակերպության անդամների բացահայտումը և կալանավորումը**

Ահա այսպիսի բովանդակությամբ ամսագիր էին կազմել «Հանուն Հայրենիքի» կազմակերպության անդամները: Սակայն իրադարձություններն ընթանում են ոչ բարեհաջող ընթացքով: 1968թ. հուլիսի 2-ի վաղ առավոտյան Հ. Վասիլյանը, Գ. Հեքիմյանը, Մ. Մնոյանը, հավաքվում են Լ. Առուշանյանի բնակարանում և փորձում են Երևան տեղափոխել «Հանուն Հայրենիքի» ամսագրի շուրջ 101 օրինակ: Երևան գալու ճանապարհին՝ ավտոբուսի մեջ, ոստիկաններն իրականացնելով խուզարկություն, բացահայտում և ձերբակալում են ամսագիրը տեղափոխող անձանց: Այս ձերբակալություններին հաջորդում է խմբի մյուս անդամների

բացահայտման և ձերբակալման գործընթացը: Խուզարկությունների ընթացքում ՊԱԿ-ը Լ. Առուշանյանի բնակարանից հայտնաբերում է «Հանուն Հայրենիքի» ամսագրի մնացյալ 242 օրինակները: Փաստացի, ամսագրի տպագրված ողջ տպաքանակը առգրավվում է ՊԱԿ-ի կողմից (Հայոց Պատմություն, 2016):

1968թ. հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում ձերբակալվում, այնուհետև դատապարտվում են «Հանուն Հայրենիքի» ընդհատակյա կազմակերպության 8 անդամները՝ Հովիկ Վասիլյանը (6 տարի), Ասատուր Բաբայանը (6 տարի), Գևորգ Հեքիմյանը (6 տարի), Սարգիս Թորոսյանը (6 տարի), Աղասի Անտոնյանը (5 տարի), Ճիրակ Գյունաշյանը (4 տարի), Լևոն Առուշանյանը (4 տարի) և Հայկ Իսկանդարյանը (դատավճիռ չի կայացվել՝ նախաքննական փուլում մահվան պատճառով): Կալանավորված այլախոհների համար նախատեսված էր տվյալ ժամանակաշրջանին բնորոշ քաղաքական հայտնի հոդվածները. ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասը (հակասովետական ագիտացիա և պրոպագանդա) և 67-րդ հոդվածը (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպման գործունեությունը, ինչպես նաև հակասովետական կազմակերպությանը մասնակցելը) (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 6, թ. 8):

Նախաքննական փուլում Հայկ Իսկանդարյանի մահը շարունակում է մնալ առեղծվածային մինչ օրս: Խորհրդային հայտնի այլախոհ Վարդան Հարությունյանը, անդրադառնալով Հ. Իսկանդարյանի առեղծվածային մահին և դրա բացահայտմանը, նշում է. «Դատավարությունից առաջ նա մահացավ ՊԱԿ-ի մեկուսարանում: Մինչ օրս նրա մահվան հանգամանքները հայտնի չեն և անհայտ կմնան այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայությունը միայն անունով է դարձել ազգային անվտանգություն, իսկ իրականում՝ և՛ իր մտածողությամբ, և՛ իր առջև դրված խնդիրներով, և՛ իր առօրյայով, և՛ իր գործելաոճով, և՛ անցյալի նկատմամբ դրսևորվող անսքող հավատարմությամբ մնացել է Չեկա-ՊԱԿ- ԿԳԲ» (Հարությունյան Վ, 2014):

Գևորգ Հեքիմյանն իր հուշերն ամփոփող ձեռագրերում, անդրադառնալով «Հանուն Հայրենիքի» ամսագրի տպագրմանը և դրան հաջորդած ձերբակալություններին, գրում է. «Ամսագրի գաղտնի հրապարակումը ռումբի ազդեցություն թողեց ՊԱԿ-ի և առհասարակ կոմունիստների վրա: Քննության ժամանակ անընդհատ հարցնում էին, թե՞ որտեղից ենք ձեռք բերել հոդվածները: Եվ կային իսկական չեկիստներ, որոնք ձգտում էին ապացուցելու, թե ինչ նշանակություն ունի՝ Ղարաբաղը և Նախիջևանը Հայաստանի՞նն են, թե՞ մեր (չեկիստի համար՝ մեր) եղբայրական Ադրբեջանինը» (Գևորգ Հեքիմյան անտիպ հուշագրություն):

Հովիկ Վասիլյանը վերհիշելով Խորհրդային տարիներին «Հանուն Հայրենիքի» ամսագրի տպագրումը նշել է. «Ներկայիս հայացքով գնահատելով այն օրերի իրականության մեր ընկալումը՝ շատ միամտություններ գտանք այնտեղ, բայց գոհունակությամբ արձանագրեցինք, որ այդժամ էլ

մենք զերծ ենք մնացել պոռոտախոսությունից ու պոռոտամտությունից, քաղաքական սեթևեթանքի նշույլ իսկ թույլ չենք տվել. ախտեր, որոնցով տառապում է ներկա ամբոխային մամուլի «ազատ» անվանված շուկան՝ բառի բուն իմաստով» (Վասիլյան Հ, 2016):

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հանուն Հայրենիքի» ընդհատակյա կազմակերպությունը ծանրակշիռ ներդրում ունեցավ Խորհրդային Հայաստանում այլախոհական շարժումների զարգացման մեջ: «Հանուն Հայրենիքի» անունը կրող ամսագիրը, որը, թեև հայ այլախոհները չկարողացան տարածել հայ ժողովրդի մեջ ՊԱԿ-ի կողմից բացահայտվելու և ձերբակալվելու պատճառով, այնուամենայնիվ, ներկայումս այդ ամսագիրը արժեքավոր սկզբնաղբյուր է, որի ուսումնասիրումը հնարավորություն է տալիս պատկերացումներ կազմել «Հանուն Հայրենիքի» ընդհատակյա կազմակերպության գաղափարախոսության և գործունեության առանցքների վերաբերյալ:

«Հանուն Հայրենիքի» կազմակերպությունը, ըստ էության, տեղավորվում էր ազգային հարցերի բարձրաձայնման գաղափարական ուղղության շրջանակներում: Բարձրաձայնվում էին ազգային հիմնախնդիրներ, ներկայացվում էր տարածքային պահանջատիրություն՝ Նախիջևանի և Ղարաբաղի վերաբերյալ, ինչպես նաև այլ ազգային հարցեր, սակայն բացակայում էր անկախության վերականգնման համար պայքարի գաղափարախոսությունը: Առաջ քաշված այս տրամաբանությունը, մեծամասամբ, ներկայացնում է Խորհրդային Միությունում այլախոհական, հայրենասիրական գործունեություն ծավալած «Հանուն Հայրենիքի» կազմակերպության գաղափարախոսական սկզբունքներն ու մոտեցումները:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


**Կիրակոսյան, Ջ. Ս., Սահակյան, Ռ.Գ.** (1972). *Հայաստանը միջազգային դիվանագիտության և Սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)*, Հայաստան հրատ., Երևան.

**Հարությունյան, Ծ.** (2024). Այլախոհության գաղափարական ուղղվածությունները Խորհրդային Հայաստանում 1960-80-ական թթ.-ին, *Գիտական տեղեկագիր. 1(46)*, Երևան.

**Հարությունյան, Ծ.** (2024). Ազգային միացյալ կուսակցության հիմնադրումը և նրա դերն ու նշանակությունը Խորհրդային Հայաստանում 1960-80-ական թթ. ընթացող այլախոհական շարժման ընթացքում, *Գիտական Արցախ, 1(20)*, Երևան.

**Հարությունյան, Ծ.** (2024). Այլախոհական շարժումների ուժգնացման երկրորդ շրջանը Խորհրդային Հայաստանում (1968-1978 թթ.), *Լրաբեր հասարակական գիտությունների հանդես*, 1*(670)*, Երևան.

**Հարությունյան, Շ.** (2023). Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը որպես Հայաստանի մասնատման «իրավական» հիմք և այլախոհության ձևավորման խթան, *Հայկական Քաղաքագիտական Հանդես 2(20)*, Երևան:

**Հարությունյան, Վ.** (2014). *Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում*, Վան Արյան հրատ, Երևան.

**Նժդեհ** (1968). *Կեանքն ու գործունէութիւնը, նշխարներ, վկայութիւններ*, ՏՊ. Համազգային հրատ, Պէյրութ.

**Վասիլյան, Հ.** (2016). *Քաղաքական վերլուծություն կամ իրականության վերականգման ևս մեկ փորձ*, Երևան.

***Հայոց Պատմություն*** (2016). ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ , Հատոր IV, գիրք երկրորդ, Երևան.

***Հայաստանի ազգային արխիվ***, ֆ. 1191, ց. 20, գ. 6.

***Գևորգ Հեքիմյանի անձնական արխիվ***, անտիպ հուշագրություն.

## REFERENCE LIST

**Kirakosyan, Dzh. S., Saakyan R.G.** (1972). Armeniya v dokumentah mezhdunarodnoj diplomatii i sovetskoj vneshnej politiki *(Armenia in the documents of international diplomacy and Soviet foreign policy)* (1828-1923), izd. Armenii, Erevan.

**Arutyunyan, SH.** (2024). Ideologicheskie orientacii inakomysliya v Sovetskoj Armenii v 1960-80-e gody *(Ideological orientations of dissent in Soviet Armenia in the 1960s-80s),* Nauchnyj vestnik: 1(46), Erevan.

**Arutyunyan, SH.** (2024). Sozdanie Ob"edinennoj nacional'noj partii, ee rol' i znachenie v Sovetskoj Armenii v 1960-80-e gody. vo vremya prodolzhayushchegosya dissidentskogo dvizheniya *(The creation of the United National Party, its role and significance in Soviet Armenia in the 1960s-80s. During the ongoing dissident movement),* Nauchnyj Arcah, 1(20), Erevan.

**Arutyunyan, SH.** (2024). Vtoroj period aktivizacii dissidentskih dvizhenij v Sovetskoj Armenii *(The second period of activation of dissident movements in Soviet Armenia)* (1968-1978), ZHurnal social'nyh nauk «Lraber», 1(670), Erevan:

**Arutyunyan, SH.** (2023). Moskva v 1921 godu Soglashenie ot 16 marta kak «pravovaya» osnova razdela Armenii i stimul dlya formirovaniya inakomysliya *(Moscow in 1921 The March 16 Agreement as a "legal" basis for the division of Armenia and an incentive for the formation of dissent),* Armyanskij zhurnal politicheskoj nauki 2(20), Erevan.

**Arutyunyan, V.** (2014). Inakomyslie v Sovetskoj Armenii, gazeta «Van Ar'ya», Erevan.

**Nzhde** (1968). ZHizn' i deyatel'nost', vekhi, svidetel'stva *(Life and work, milestones, testimonies),* TP. Gazeta Hamazkain, Bejrut.

**Vasilyan, H**. (2016). Politicheskij analiz ili ocherednaya popytka vosstanovleniya real'nosti *(Political analysis or another attempt to restore reality),* Erevan.

***Istoriya Armenii*** (2016). Institut istorii Nacional'noj akademii nauk Respubliki Armeniya *(Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia),* tom IV, kniga vtoraya, Erevan.

***Nacional'nyj arhiv Armenii***, *(National Archives of Armenia)* f. 1191, c. 20, s. 6.

***Lichnyj arhiv Gevorga Ekimyana***, (*Personal archive of Gevorg Ekimyan*) unikal'nye memuary.

## РЕЗЮМЕ

## "ЗА РОДИНУ" ПОДПОЛЬНАЯ ОРГАНИЗАЦИЯ

## ШАГЕН АРУТЮНЯН

В 60-х годах в Советской Армении были созданы многочисленные подпольные группы, которые значительно изменили общественное мнение и помогли в восстановлении независимости Армении, решении проблем страны и защите прав человека. Среди других групп в Советской Армении в конце 60-х годов появилась подпольная группа"За Родину", которая разделяла идеологические принципы национального патриотизма. Подпольная группа "За Родину" сыграла важную роль в борьбе с диссидентами в Советской Армении.

Цель этой статьи состоит в том, чтобы представить подпольную группу "За Родину" и ее действия как один из способов выразить недовольство армянами.

Для достижения этой цели было решено изучить и обсудить процесс создания, идеологические приоритеты и деятельность вышеупомянутой организации, которая была создана в Советской Армении.

Исследование использовало как сравнительные, так и исторические методы. Контент-анализ был проведен с использованием мемуаров, интервью и официальных и частных архивных документов.

Основными идеологическими целями подпольной группы "За Родину" были сохранение армянского языка в целостности, обострение национальных проблем и призыв к воссоединению Нахичевана и Карабаха с Матерью-Арменией. Все это было представлено в статьях в одноименном журнале, написанных членами организации.

***Ключевые слова:*** Инакомыслие, Геноцид армян, земельные претензии, журнал"За Родину", «Открытое письмо кочинцам», «Судебная комедия», «Два слова о Карабахе и Нахичевани»

**ABSTRACT**

**"FOR THE HOMELAND" UNDERGROUND ORGANIZATION**

**SHAHEN HARUTYUNYAN**

Numerous underground groups were established in Soviet Armenia in the 1960s, which significantly influenced public opinion in the country and played a major role in the campaign to restore Armenia's independence, raise national issues, and defend human rights. Among other groups, the clandestine group "For the Homeland" emerged in Soviet Armenia in the late 1960s, bringing with it the ideological undertones of period-specific national aspirations. In the midst of the dissident activities in Soviet Armenia, the clandestine group "For the Homeland" played a special role.

This article's goal is to introduce the "For the Homeland" clandestine group and its actions, which is oneway Armenian discontent manifests itself.

The aim was to investigate and debate the foundation process, ideological priorities, and operations of the aforementioned organization, which was established in Soviet Armenia, in order to achieve the purpose.

Both historical and comparative methodologies were used in the investigation. Interviews, memoirs, and official and private archive documents were all subjected to content analysis.

It was determined that the "For the Homeland" underground group's primary ideological goals were to preserve the integrity of the Armenian language, raise national concerns, and urge the reunion of Kharabakh and Nakhichevan to Mother Armenia. All of this was represented in the articles written by the organization's members for the magazine of the same name.

***Key words:*** Dissent, Armenian Genocide, land claims, "For the Homeland" magazine, "Open letter to Cochinians", "Court comedy", "Two words about Kharabakh and Nakhichevan"

*Հոդվածը ստացվել է՝ 22.09. 2024*

*Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 27.09. 2024*

*Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 10.11.2024*